# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆ

«20» 05 2026 թ. Թիվ 80-Հ

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, վերսկսելու և քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, վերսկսելու և քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդություն ներկայացնելու աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մինչդատական վարույթ իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչ)՝

1) նշանակված փորձաքննության եզրակացության կամ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը չստացված լինելու հիմքով քրեական հետապնդման ժամկետը կասեցված լինելու դեպքում փորձաքննության եզրակացությունը կամ իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցման պատասխանը ստանալու դեպքում նույն օրը, իսկ անհնարինության դեպքում հաջորդ օրը, միջնորդություն ներկայացնել հսկող դատախազին՝ կասեցված քրեական հետապնդման ժամկետը վերսկսելու վերաբերյալ.

2) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդությունը հսկող դատախազին ներկայացնել քրեական հետապնդման ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ՝ բացառությամբ քրեական վարույթի առանձնահատկություններով պայմանավորված անհնարինության կամ օբյեկտիվ հանգամանքների հետ կապված այլ դեպքերի, որոնց վերաբերյալ քննիչի կողմից կազմվում է ստորաբաժանման պետին ուղղված զեկուցագիր՝ նշված ժամկետը չպահպանելու հիմնավորումների և պատճառների, ինչպես նաև միջնորդության ներկայացման կանխատեսվող ժամկետի մասին.

3) զեկուցագրի պատճենը ստորաբաժանման պետի կողմից անհապաղ ուղարկվում է Քննչական կոմիտեի նախագահի ոլորտը համակարգող տեղակալին, իսկ << քննչական կոմիտեի նախագահի համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների դեպքում՝ համապատասխան գլխավոր վարչության պետին:

2. Կոմիտեի նախագահի տեղակալներին և մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների պետերին՝

1) քրեական հետապնդման ժամկետը լրացած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը ստորաբաժանման պետի կողմից անհապաղ ուղարկվում է Քննչական կոմիտեի ոլորտը համակարգող նախագահի տեղակալին, իսկ Քննչական կոմիտեի նախագահի համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների դեպքում՝ համապատասխան գլխավոր վարչության պետին.

2) Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի կամ գլխավոր վարչության պետի կողմից նշված որոշումը ներկայացվում է Քննչական կոմիտեի նախագահին:

3. Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց.

1) փորձաքննությունները նշանակել և միջազգային իրավական օգնություն ցույց տալու հարցումն ուղարկել դրանց հիմքերի հայտնաբերման պահից.

2) հնարավոր սեղմ ժամկետում միջնորդություն ներկայացնել հսկող դատախազին՝ վերոգրյալ հիմքերով քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու վերաբերյալ:

4. Սույն հրամանն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ